ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2 ապրիլի 2019թ. թիվ 118

ՀՐԱՉ ՓԻԼՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի, ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատարի զեկուցագիրը և հաշվի առնելով Հ.Փիլոյանի զեկուցագիրը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. Ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունները ոչ պատշաճ կատարելու, դպրոցի ներքին կարգապահական կանոնները խախտելու համար «ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնու ակադեմիկոս Մ.Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Հրաչ Փիլոյանի նկատմամբ կիրառել « նկատողություն» կարգապահական տույժը:

2. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատարին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. ապրիլի 2
ք.Վանաձոր